Summaries
Ամփոփումներ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ՈՒՐԱԼԻ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

ԻՎԱՆ ՍԵՄՅԱՆ

Հարավային Ուրալի տափաստանները հայտնի են նաև ընդարձակ ամրացված բնակավայրերի առկայությամբ: Սինտաշտայի հնագիտական մշակույթը ստեղծել է յուրօրինակ տնտեսական համակարգ, որը հիմնված էր նստակյաց անասնապահության և զարգացած մետաղագործության վրա: Հումքի աղբյուրների վերահսկման և կառավարման համար հիմնվել են ընդարձակ ամրացված բնակավայրեր, որտեղ տափաստանի չափանիշներով կենտրոնացած էր մեծ թվով բնակչություն: Հայտնաբերված հնագիտական իրերը վկայում են հասարակության խիստ ռազմականացման մասին: Չնայած այդ ամենին՝ Հարավային Ուրալի հին հնդեվրոպացիները չյուրացրեցին երկրագործությունը:

Սույն հոդվածում քննության են առնվել Հարավային Ուրալի բրոնզի դարում ամրաշինական կառույցների առաջացման, ձևափոխման և անկման հարցերը: Հոդվածում քննվել են հնագիտորեն առավել լավ ուսումնասիրված ամրացված բնակավայրերի տվյալները, ինչպես նաև ներկայացվել են հարցի շուրջ ժամանակակից մոտեցումները և տեսակետները: Հիմնվելով հնագիտական բազմատեսակ սկզբնաղբյուրների վրա՝ հեղինակը և վերակազմող նկարիչը վերակազմել են ամրացված բնակավայր Կամենի Ամբար հնավայրի սինտաշտյան ժամանակաշրջանի արտաքին տեսքը: Վերակազմվել է ընդհանուր արտաքին տեսքը, պաշտպանական պատը և խանդակը, ինչպես նաև պաշտպանված մուտքի հավանական արտաքին տեսքը: Հիմնվելով հնագիտական սկզբնաղբյուրների վրա՝ հեղինակը գտնում է, որ ամրաշինության սինտաշյան համակարգը սոցիալական բարդվածության կարևոր ցուցիչներից էր և պաշտպանական մեծ ներուժ էր կրում:

ԽԵԹԵՐԵՆ *mi-e-nu-us*. ՄԱՐԴԻԿ ՈՐՊԵՍ «ՀԵԶ» ԿԱՄ «ՓՈՔՐ»

ՅԱՆ ՊՈՒՀՎԵԼ

Վերջերս հրատարակված հոդվածում խեթերեն *mi-e-nu* բառը մեկնաբանվել է որպես hapax բառ «տղամարդ» (KBo 3.28 II 16), նաև «մարդ» իմաստով, որը մեծաքանակ ազգակից բառեր ունի՝ համարժեք անգլերենի «մարդ» բառի հետ, որտեղ *me-e-nu* «փափուկ» իմաստը բոլոր մյուս ենթատեքստերում վերաձևված է որպես «տղամարդ»: Հոդվածում վճռորոշ KBo 3.28 II 14-16 ենթատեքստը վերանայվել է և վերաթարգմանվել, մերժվել են նախորդ հոդվածի ենթադրությունները և եզրակացությունները՝ հաստատելով «մարդկային թուլություն»-ը աստվածային ուժերի հետ ունեցած բանաձևային հակադրությունը:

ԽԱՐՏԱՊՈՒ՝ ԽԵԹԵՐԸ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

ՄԻԽԱՅԵԼ ԲԱՆԻԱՅԻ

Պատմական, վիմագրական և լեզվական բնույթի փաստարկները ամրապնդում են այն տեսակետը, որ TÜRKMEN KARAHÖYÜK 1-ը (այսուհետև TKH 1) Ք.ա. 12-րդ դարում իշխած Խարտապուի արձանագրությունն է: Ակնհայտորեն դրա վրա Ք.ա. 8-րդ դարում կատարվել է խմբագրում, որի նպատակը Խարտապուի հայր Մուրսիլիի ինքնության թաքցնումն է՝ նրա արքայական տիտղոսները ջնջելու միջոցով, որոնք առկա են Խարտապուի բոլոր մյուս արձանագրություններում: Բոլոր տարժամանակյա առանձնահատկությունները, որոնք բնութագրական են Ք.ա. 8-րդ դարի համար և բացահայտվել են Goedegebuure *et al.* (2020)-ի կողմից, վերաբերում են միայն այդ հատվածին:

Ոճաբանորեն Խարտապուի տեքստերը կարող են դասվել տարածապես մեկուսացած մի փոքր խումբ լուվիական արձանագրությունների շարքում, որոնք մոտ են Խարտապուի թագավորությանը Ք.ա. 12-րդ դարի սկզբներին, եթե հաշվի առնենք ուշ շրջանի լուվիական տեքստերին անհայտ 3-րդ դեմքով շարադրանքի չափանիշը:

Կարելի է ենթադրել Խարտապուի նույնականությունը Ուրխի-Թեշուբի որդիներից մեկի հետ, որոնք հիշատակվում են CTH 569-ում: Այդ տեքստը, որը վերաբերում է Մուրսիլի III-ի (Ուրխի-Թեշուբ) որդիներին տրված նվիրատվությանը Թուդխալիյա IV-ի կառավարման շրջանում, թույլ է տալիս նույնացնել Խարտապուի տիրույթը, որը հարևան էր Կուրունտայի տիրույթին և որը նա ընդարձակել էր Խեթական տերության անկումից հետո: Այդ տարածական ընդարձակումը կարելի է տեսնել ինչպես հնագիտորեն, այնպես էլ՝ TKH 1-ի այն հատվածում, որտեղ խոսվում է մուշկերի արքաների հարկադրական բնակեցման մասին: Առաջինը արտացոլված է ի դեմս Հալիսի երկայնքով հայտնաբերված խեցեղենի, որն ապացուցում է նյութական մշակույթի շարունակականությունը Թարխունտասսայի և Քաման-Քալեհյոյուքի միջև:

Ք.ա. 8-րդ դարում Խարտապուի արձանագրության նկատմամբ հետաքրքրությունը լավ է հասկացվում Տուվատի-Վասուսարմայի արքայատոհմի ջանքերի համատեքստում՝ վերադարձնելու TKH 1-ում հիշատակվող Խարտապուի որոշ տարածքները, որոնք գրավվել էին Հալիսի մյուս կողմում փռյուգացիների կողմից Ք.ա. մոտ 850 թ-ին: Հնագիտական վկայություններ կան նաև այդ շրջանի և Գորդիոնի միջև կապի մասին:

Հնագիտական վկայությունները, որոնք հիմնականում արտացոլված են ի դեմս օտար ծագման խեցեղենի (կարմիր ակոսավոր խեցեղենը) նույնացնում են մուշկերին Ալզիի և Պուրուլումզիի հնավայրերում, որտեղ նրանք առաջին անգամ հիշատակվում են ասորեստանցիների կողմից Տավրոսից այն կողմ՝ Նինուրտա-ապիլ-Էկուրի օրոք (Ք.ա. 1191–1179 թթ.): Այդ նույն խեցեղենը հայտնաբերվել է նաև Կենտրոնական Անատոլիայում (Հալիսի ոլորանի շրջանում)՝ այնտեղ, որտեղ գտնվում էր մուշկերի արքաների բնակության հնարավոր վայրը ըստ TKH 1-ի: Սա ճշգրտում է համընդհանուր ընդունելություն ստացած այն տեսակետը, որը մուշկերին առնչում է Գորդիոնի հետ: Փռյուգացիների գալուստը Անատոլիա կապվում է արմատական

մշակութային ընդհատման հետ Գորդիոնի YHSS 7B փուլում Ք.ա. մոտ 900 թ-ին, որը համապատասխանում է բրիգների ցեղի հետ առնչվող եվրոպական հնավայրերի լքմանը:

ԹԱԲԱԼԻ ՈՉ ԹՇՆԱՄԻ, ԱՅԼ ԼՈՅԱԼ ԱՐՔԱՆԵՐԸ Ք.Ա. ՄՈՏ 735 Թ.: ԹՈՓԱԴԱ §§ 3-4-ի ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՏԻԵՆ ԴԻԼԼՈ

Հոդվածում առաջարկվում է Ք.ա. մոտ 735 թ. թվագրվող Թոփադայից (ներկայումս Աջիգյոլ՝ Թուրքիայի Նևշեհիրի շրջանում) հայտնաբերված հիերոգլիֆային արձանագրության 3-րդ տողում առկա առայժմ չվերծանված նշանի մեկնաբանությունը: Նշանը սովորաբար թարգմանվում է որպես «թշնամական», որով նշվում է Թաբալի Մեծ արքա Վասուսարմայի դեմ այնտեղ կամ Պար*զու*տայում ստեղծված ութ արքաներից կազմված դաշնությունը: Սա որպես հակադրություն 4-րդ տողում հիշատակվող երեք դաշնակիցների, որոնց շարքում են Տուվանայի արքա Վարպալլավան (ներկայիս Նիյդեի և Բորի շրջանում) և ասորեստանյան տեքստերում Šinuhtu կոչվող տարածքը (ներկայիս Ակսարայի մոտ), որոնք երկուսն էլ հայտնի են Ք.ա. 8-րդ դարում (հմմտ. Hawkins 2000, Bryce 2012): Դ'Ալֆոնսոյի կողմից այս արձանագրության վերջերս առաջարկված ավելի վաղ թվագրումը՝ Ք.ա. մոտ 900 թ. (2019) համապատասխան փաստարկներով ժխտվել է: Ավելին, չվերծանված նշանի նույնականացման շնորհիվ պարզվում է, որ այսպես կոչված «թշնամական» երկրների դերը բացարձակապես այլ կերպ պետք է մեկնաբանել:

Դատելով արձանագրության 1-ին տողի վերջում առկա x նշանի հետքերից, որոնք տեսանելի են առկա լուսանկարներում, ինչպես նաև մեր ուղեկից Meijer-ի լուսանկարներում (Dillo 2003), և հաշվի առնելով նշանների հերթականությունը, համար 455 և 447 նշանները կարող են նույնական լինել, ինչը հանդիպում է ամենուրեք մեր արձանագրության մեջ: Հոգնակիության ցուցիչը նույնպես առկա է: Հետագա ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այդ նշաններն արտահայտում են լուվիերեն [IUST]ITIA$_x$-*ni*$_x$-*z*[*i/a*] || > /tarrawanninzi/ (հոգն. թվով), որի նշանակությունը որպես «հավատարիմ» պարզվեց վերջերս (Melchert 2019, Yakubovich ACLT$_2$): Սա 3-4-րդ տողերի համար բացարձակապես նոր մեկնաբանության հնարավորություն է տալիս:

Հոդվածում ապցուցվում է, որ Պար*զու*տայի հետ բախման ժամանակ լայն իմաստով Թաբալի յոթ (այլ ոչ ութ) արքաները «հավատարիմ» էին Մեծ արքա Վասուսարմային: Եվս երեք հավատարիմ արքաներ հիշատակվում են հաջորդող 4-րդ տողի նախադասության մեջ, որոնցից առնվազն երկուսը՝ Վարպալլավան և Կիյակկին ուղղակիորեն ներգրավված էին բախման մեջ՝ Թոփադայի արձանագրության վայրից նրանց իշխանությունների հարավ և արևմուտք գտնվելու շնորհիվ, իսկ երրորդը՝ Ռուվանտան, հնարավոր է՝ մարտակառքային ռազմարվեստում իր ունեցած հմտությունների պատճառով: Պար*զու*տայի շրջանը, որը, հավանաբար, կապված է ասորեստանյան տեքստերի Բիթ-Բուրուտաշի

հետ, պետք է գտնվի Թոփադայից հարավ-արևմուտք, այն վայրում, որտեղ հետո կանգնեցվել է հուշարձանը: Այստեղ՝ հյուսիսային Թաբալի սահմանին, այն է՝ Վասուսարմայի Բուն Թաբալում է տեղի ունեցել ռազմական բախումը և Պար*զու*տացու պատասխան գործողությունը:

ԿՆԻՔՆԵՐԻ ԴԱՋՎԱԾՔՆԵՐ ՀԻՆ ԱՐՏԱՇԱՏԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԽԻՄ ԼԻԽՏԵՆԲԵՐԳԵՐ, ՏՈՐԲԵՆ ՇՐԱՅԲԵՐ,
ԿԱՐՄԵՆ ԹԻՆԳ, ՄԿՐՏԻՉ Հ. ՋԱՐԴԱՐՅԱՆ

Հոդվածում ներկայացվում են հայ-գերմանական Արտաշատ ծրագրի շրջանակներում 2022 թ-ին իրականացված պեղումների ընթացքում պեղված նոր տիպի կնիքների դաջվածքները: Կնիքները հայտնաբերվել են պահեստավորման համար նախատեսված կավանոթների վրա՝ Արարատյան դաշտի դասական Արտաշատ հնավայրում (հին Արտաքսատա)՝ թիվ XIII բլրի վրա: Հնավայրի կարևորությունը մինչհելլենիստական և ուրարտական շրջաններում ավելի ու ավելի ակնառու է դառնում վերջին տարիներին, և պաշտամունքային տեսարաններում արքաների և քրմերի պատկերներով նոր կնիքների առկայությունը ամրապնդում է այդ ենթադրությունը՝ մեկ անգամ ևս բարձրացնելով հին Արտաշատի մինչհելլենիստական բնակավայրի բնույթի խնդիրը:

Կնիքի այդ տիպը առ այսօր հայտնի էր միայն 1972 թ-ին Արտաշատի թիվ I բլրից հայտնաբերված կարասի վրա արված դաջվածքից, որի մեկնաբանությունը պարզ չէր դրա վատ պահպանված վիճակի պատճառով: Այժմ, առնվազն երկու տարբեր կնիքների տիպեր կարելի է առանձնացնել, որոնք երկուսն էլ պատկերում են միևնույն տեսարանները՝ փոքր տարբերությամբ: Երրորդ կնիքը, որի դաջվածքը ավելի վատ է պահպանվել, թվում է, պատկերում է միևնույն տեսարանը, սակայն, հակառակ դասավորությամբ: Բացի այդ, երրորդ կնիքի ձևը մինչև վերջ պարզ չէ: Միևնույն տիպի երկու կնիքները քառանկյուն են՝ կլորացված եզրերով և աջ կողմում պատկերում են կանգնած տղամարդու, որի աջ ձեռքը բարձրացված է՝ ափը դեպի վեր, իսկ ձախ ձեռքը ուղղված է ներքև՝ երկու զոհասեղանների/աշտարակների դիմաց: Զոհասեղանների/աշտարակների վերևում առկա է կետերի միջոցով պատկերված աստղ: Կանգնած ֆիգուրը պատկերված է պրոֆիլով, այն հագել է երկար տունիկ և կրում է սրածայր գլխանոց: Թվում է, որ պատկերն իրենից պաշտամունքային տեսարան է ներկայացնում: Պատկերների ոճը նրբագեղ է, տղամարդու ֆիգուրը սլացիկ է և դետալները արված են խնամքով: Երրորդ կնիքի դաջվածքը, թվում է, միևնույն տեսարանն է պատկերում. աջ և ձախ կողմերից տեսանելի են կանգնած մարդը և զոհասեղանները/աշտարակները: Հնարավոր չէ ասել՝ արդյո՞ք այստեղ նույնպես աստղ է պատկերված: Նմանապես պարզ չէ կնիքի ձևը. թվում է, այն պետք է օվալաձև տեսք ունենար: Տեսարանի պատկերագրության տարրերի համեմատական ուսումնասիրությունը, ինչպես, օրինակ, արքայական ֆիգուրը, զոհասեղանները/աշտարակները և աստղերը, հայտնաբերվել են ուրարտական հնավայրերի այլ կնիքների վրա ևս (Արմավիր, Կարմիր Բլուր և Վան):

Պետրոգրաֆիկ հետազոտությունը պարզորոշ ցույց է տալիս, որ քննարկվող տիպաբանական խմբերը նույնականացվում են նաև նյութերի բնութագրման միջոցով: Քանի որ երկու խմբերը ակնհայտորեն պատրաստված են մեկ կամ երկու արհեստանոցներում, որտեղ օգտագործվել է միևնույն բաղադրությունը, մյուս տիպը արտադրված է ուրիշ արհեստանոցում՝ այլ բաղադրությամբ: Պետրոգրաֆիկ հետազոտությունը ցույց է տալիս, որ անոթների արտադրությունն իրականացվել է տեղական ինքնուրույն հոսքագծերով, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր հատուկ բաղադրությունը:

2021 թ-ին հայ-գերմանական Արտաքսատա ծրագիրը հայտնաբերեց ուրարտական կոթողային կառույցի մնացորդներ թիվ XIII բլրից շուրջ 250 մետր հարավ, որն ունի խոշոր եռամաս դարպաս: Կառույցի՝ 14C-ի միջոցով թվագրումը նշում է մոտավորապես 800 թ.: Այս վաղ թվագրումը՝ մինչհելլենիստական կնիքների դաջվածքների հետ միասին կարող է նշել, որ Արտաշատը կարող է լինել առ այսօր վստահաբար չտեղայնացված ուրարտական Մենուախինիլիի մեկ այլ թեկնածու՝ Արարատյան դաշտում ուրարտական առաջին քաղաքը, որը հիմնադրել էր Ուրարտուի արքա Մենուան (Ք.ա. մոտ 810–785 թթ.):

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ. ԱՐՈՒՃԻ ԵՎ ԴԱՇՏԱԴԵՄԻ ԴՂՅԱԿՆԵՐՆ ՈՒ ՔԱՐԱՎԱՆԱՏՆԵՐԸ ԴՎԻՆ-ԱՆԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Հոդվածում քննարկվում է միջնադարյան Հայաստանում ենթակառուցվածքների զարգացման և կազմակերպման խնդիրը՝ կենտրոնանալով Հայաստանի երկու խոշոր քաղաքների՝ Դվինի և Անիի միջև գտնվող Մետաքսի ճանապարհի տարանցիկ ուղիներից մեկի վրա: Թիրախային տարածքը՝ պատմական Արագածոտն գավառի մի մասը, գտնվում է Արարատյան դաշտի և Շիրակի սարահարթի միջև և հազարամյակներ շարունակ եղել է տարանցիկ գոտի: Զարգացած միջնադարում՝ Բագրատունյաց թագավորության, ապա և Զաքարյան իշխանապետության շրջանում, ենթակառուցվածքները բարելավելու ուղղությամբ պետական ջանքերի մասին են վկայում ինչպես գրավոր աղբյուրները, այնպես և ճարտարապետական կառույցները, մասնավորապես՝ ճանապարհները վերահսկող ամրոցները, քարավանատներն ու կամուրջները:

Սույն հետզոտության առանցքը Արուճ և Թալին բնակավայրերն են, որոնք Դվինի և Անիի հետագծին գտնվող զարգացած գյուղաքաղաքների և ավանների թվում ամենաբնորոշ մոդելներն են: Դրանք կարևոր նշանակություն ունեին երկրի տնտեսության մեջ: Այդ քաղաքատիպ բնակավայրերում զբաղվում էին գյուղատնտեսությամբ և արհեստներով, ինչպես նաև շահագործում էին այնպիսի շահութաբեր հաստատություններ, ինչպիսիք են՝ ջրաղացները, ձիթհանները և հնձանները: Միաժամանակ, դրանք տեղական վարչական կառավարիչների նստավայրեր էին, որոնք տեղակայված էին այդ բնակավայրերում կառուցված

ամրացված դղյակներում: Այդ երկու գյուղաքաղաքները նաև Դվին-Անի տարանցիկ ճանապարհի հաջորդական կանգառներ էին Արագածոտնում, որտեղ կառուցված քարավանատներն ու ամրոցները միջնադարյան ենթակառուցվածքի անբաժանելի մասն էին և նշանակալի դեր են խաղացել զարգացած միջնադարում առևտրային և մշակութային հարաբերությունների կազմակերպման գործում: Հոդվածում ներկայացված են նաև Արուճի և Դաշտադեմի դղյակներում իրականացված պեղումների շնորհիվ հայտնաբերված ներմուծված ապրանքների և բյուզանդական, սելջուկյան, ելտկուզյան, վրացական և մոնղոլական դրամների գյուտերը, որոնք վկայում են 12-14-րդ դարերում տարածաշրջանային առևտրային ու մշակութային փոխհարաբերություններում Արուճի և Թալինի դերի մասին:

ԽՈՅԱԿԵՐՊ ԵՎ ՁԻԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐ. ՄԻ ՏԱՐԱԾՎԱԾ ԷԹՆՈ-ԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ

ԴԻԹԵՐ ՇՈՒՐՐ

Թեև խոյակերպ և ձիակերպ տապանաքարերը հիշատակվում և մասամբ նաև պատկերվում են ճանապարհորդական նոթերում սկսած 1818 թ-ից, սակայն, մինչ օրս դրանք մնում են քիչ ուսումնասիրված: Թուրքիայում և Ադրբեջանում այդ տապանաքարերը ներկայացվում են որպես նախամահմեդական «թյուրքական ժառանգության» մաս, որն արմատներով գնում է դեպի սիբիրյան նախահայրենիք, հաճախ դրանք առնչում են ակքոյունլու և կարաքոյունլու թյուրքական ցեղային դաշնություններին: Մինչդեռ, այլ ժողովուրդների կողմից հիշյալ տապանաքարերի օգտագործման հանգամանքը հերքվում կամ նսեմացվում է:

Առկա նյութը ցույց է տալիս, որ գոյություն է ունեցել այս տապանաքարերի օգտագործման հայկական ավանդույթ, և որ վրացիներն ու Իրանական Ատրպատականի «ասորի» քրիստոնյաները նույնպես օգտագործել են դրանք: Ամենահին հավաստի տվյալները հայկական խոյակերպ տապանաքարերի վերաբերյալ հայտնի են նախիջևանյան Ջուղայից, իսկ թուրքականների վերաբերյալ՝ Հայաստանի Որոտան գյուղից (վերաբերում են շիա և ալևի համայնքներին և թվագրվում 16-րդ դ-ի վերջով): Թերևս 15-րդ դ-ի սկզբով են թվագրվում Խլաթի խոյակերպերը: Իսկ հայաստանյան Սարավանից հայտնի հայկական արձանագրությամբ խոյակերպը թվագրվում է 1264 թ.:

Խոյի և ձիերի պատկերով տապանաքարերն առկա են հատկապես Դերսիմի ալևի զազաների և Իգդիրի շիա թուրքերի միջավայրում, որոնք, սակայն, 19-րդ դ-ից վաղ չեն: Լեռնային Ղարաբաղի շիա քրդերը նույնպես օգտագործել են նման տապանաքարեր 19-րդ դ-ում (այստեղ կա արաբերեն արձանագրությամբ առնվազն մեկ խոյակերպ, որը ավելի վաղ է թվագրվում): Եզդիները Հայաստանում օգտագործել են միայն ձիակերպեր, որոնք նույնպես 19-րդ դ-ից վաղ չեն:

Այս համեմատաբար փակ շրջանից անդին, կենտրոնական Փոքր Ասիայում՝ Աֆիոնկարահիսարից հյուսիս, առկա են խոյակերպ տապանաքարեր, որոնց վրա արձանագրությունները բացակայում են: Նաև Ղազախստանում՝ Կասպից

ծովի հյուսիսարևելյան կողմում, հիմնականում Մանգիշլակ թերակղզում կան խոյակերպեր, որոնցից մի քանիսը թեև ունեն արաբերեն արձանագրություններ, սակայն, դրանց թվագրումը և ծագման խնդիրը նույնպես պարզ չէ:

Չի բացառվում, որ խոյակերպ և ձիակերպ տապանաքարերը քրիստոնեական ծագում ունեն և հընթացս փոխառվել են շիա, ալևի և եզդի էթնիկ խմբերի կողմից: Պարզ չէ, թե արդյո՞ք դրանք օգտագործվել են նաև սուննի մահմեդականների և օսմանյան թուրքերի կողմից: Համենայն դեպս, այս տապանաքարերին վերաբերող շատ խնդիրներ դեռևս մնում են չլուծված:

ՆՈՒՌՆՈՒՍԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Նուռնուսի վանքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում՝ Հրազդան գետի ձախափնյա կիրճում: Վանքի գլխավոր կառույցը Ս. Աստվածածին կիսավեր եկեղեցին է: Այն հատակագծում ուղղանկյուն, իսկ հորինվածքով միանավ թաղածածկ դահլիճ տիպի կառույց է՝ երկլանջ տանիքով: Կառուցված է տեղական բազալտի սրբատաշ շարվածքով, կրաշաղախով: Կառուցման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն, ըստ ճարտարապետական հորինվածքի և հարդարման առանձնահատկությունների, կարելի է թվագրել 13-րդ դ. երկրորդ կեսով: Եկեղեցու արևմտյան կողմից ուշ շրջանում կցվել է գավիթ-տապանատունը, որից միայն պատերի ստորին շարքերն են պահպանվել: Շրջակայքում տարածվում է միջնադարյան գերեզմանոցը:

Եկեղեցու տարածքը բնակեցված է եղել դեռևս նախապատմական ժամանակներից, ինչի ապացույցն են շրջակայքի բազմաթիվ հնագիտական հուշարձանները, որոնք թվագրվում են սկսած քարի դարից:

Միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներից հայտնի Նռնաւնից վանքի սրբազան լանդշաֆտը հավանաբար ներառում էր Ս. Աստվածածին եկեղեցին, նրանից մինչև 200 մ հեռավորության վրա գտնվող ևս 3 եկեղեցական քանդահար կառույցները և դրանց շուրջ տարածվող խաչքարերով ու տապանաքարերով հարուստ գերեզմանները: Սկզբնաղբյուրներում, մասնավորապես՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տեղեկությունները ցույց են տալիս, որ 14-17-րդ դդ. Նռնաւնից վանքը կարևոր գրչության կենտրոն էր, որտեղ գիտա-կրոնական գործունեություն էին ծավալում ժամանակի հայտնի գրիչները: Նույն ժամանակամիջոցին են վերաբերում նաև վանքում հայտնաբերված երեք թվակիր արձանագրությունները:

Նուռնուսի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման և տարածքի բարեկարգման նպատակով 2022 թ. կատարվեցին պեղումներ: Հայտնաբերված գտածոները՝ ամբողջական խեցանոթներ և բեկորներ, ապակու բեկորներ, բրոնզե և երկաթյա առարկաներ, հախճապակե ուլունքներ, պաստայից կոճակներ և այլն, հիմնականում վերաբերում են 13-17 դդ.: Գտածոներից ուշագրավ են եկեղեցու սրահում՝ հատակի պեղումներով հայտնաբերված մոխրագույն խեցիով

և շառագույն հաստ շերտով անգոբապատ խեցեբեկորները, որոնք կարող են լինել բուրանոթ-կրակարանի մասեր: Մյուսը դեղնասպիտակավուն կավով պատրաստված, տեղ-տեղ պահպանված կարմրաներկով ներկված, մեջքից անցք, իսկ քթից՝ ծորակ ունեցող եղջերակերպ անոթն է, որ հայտնաբերվեց եկեղեցու հյուսիսային պատի մոտ՝ քրիստոնեական հիմնահողային թաղումների միջավայրում:

Պեղումներով հայտնաբերվել է նաև հարուստ մարդաբանական նյութ՝ 20 անհատների ոսկորների լրակազմեր: Կմախքներից 16-ը մանկական՝ մինչև 10 տարեկան երեխաների թաղումներ են, 2-ը՝ արական և իգական սեռի հասուն տարիքի մարդկանց թաղումներ, 1-ը՝ արական սեռի երիտասարդի թաղում, իսկ մեկը՝ նորածնի: